

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«\_\_\_» \_\_\_\_\_ 2013թ.

N\_\_\_\_\_ -Ն

ք. Ստեփանակերտ

«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ՊԱՐՏԱԴԻՐ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ՝  
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՏԱԴՐՎԱԾ՝  
ՏԱՐԱՅԱՎՈՐՎԱԾ ՈՐՈՇ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ  
ՎԵՐԱԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ  
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Առևտրի և ծառայությունների մասին» Լեռնային Ղարաբաղի  
Հանրապետության օրենքի 9.4-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան՝ Լեռնային  
Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ ՈՒ Մ է**.

1. Սահմանել «Առևտրի և ծառայությունների մասին» Լեռնային Ղարաբաղի  
Հանրապետության օրենքով պարտադիր դրոշմավորման ենթակա՝ Լեռնային  
Ղարաբաղի Հանրապետությունում արտադրված՝ տարայավորված որոշ ապրանքների  
դրոշմավորման և վերադրոշմավորման կանոնները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան  
հաջորդող տասներորդ օրը և կիրառվում է 2014 թվականի հունվարի 1-ից հետո  
Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրված ապրանքների նկատմամբ:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ  
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ա.

**Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր**

**«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ՊԱՐՏԱԴԻՐ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
 ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՏԱԴԻՎԱԾ  
 ՏԱՐԱՅԱՎՈՐՎԱԾ ՈՐՈՇ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ  
 ՎԵՐԱԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ**

1. Սույն կանոններին համապատասխան՝ պարտադիր դրոշմավորման կամ վերադրոշմավորման ենթակա են «Առևտրի և ծառայությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9.2-րդ հոդվածով սահմանված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրված այն ապրանքները, որոնք անմիջական արտադրողի կողմից իրացվում են 2014 թվականի հունվարի 1-ից (ներառյալ) հետո:

2. Պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքի վրա փակցվում է «Առևտրի և ծառայությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9.2-րդ հոդվածով սահմանված համապատասխան ապրանքախմբի, իսկ դրոշմապիտակների վրա տարողություն առանձնացված լինելու դեպքում՝ նաև համապատասխան տարողության տարայի համար նախատեսված (տվյալ ապրանքախմբի համառոտ անվանմամբ և տվյալ տարողությամբ) դրոշմապիտակ:

3. Դրոշմավորումը կատարվում է պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքի տարայի կամ տարայի կափարիչի վրա՝ սույն կանոնների 6-րդ կետով սահմանված տեղում՝ օրենքով սահմանված կարգով ձեռք բերված դրոշմապիտակ փակցնելու միջոցով:

4. Ապրանքի վերադրոշմավորման դեպքում նոր դրոշմապիտակը փակցվում է սույն կանոնների 6-րդ կետով սահմանված տեղում:

5. Դրոշմավորված ապրանքների վերադրոշմավորումը կատարվում է այդ ապրանքների վրա փակցված նմուշի դրոշմապիտակները կիրառությունից հանվելու դեպքում:

6. Ըստ ապրանքախմբերի և ապրանքների տարաների տեսակի՝ դրոշմապիտակները փակցվում են սույն կետի աղյուսակում նշված տեղում:

Ծածկագիրն ըստ ԱՏԳ ԱԱ-ի	Ապրանքախմբի անվանումը	Ապրանքախմբի համառոտ անվանումը	Տարայի տեսակը	Դրոշմապիտակը փակցնելու տեղը տարայի վրա
2201	ջրեր՝ ներառյալ բնական կամ	ջուր	ապակյա կամ պլաստմասսայե	կափարիչին

	արհեստական հանքային ջրերը, գազավորված կամ չգազավորված, առանց շաքարի կամ այլ քաղցրացնող կամ բուրավետ նյութերի հավելման			
2202	ջրեր՝ ներառյալ հանքային և գազավորված ջրերը, շաքարի կամ այլ քաղցրացնող կամ բուրավետ նյութերի հավելմամբ և այլ ոչ ալկոհոլային խմիչքներ	ըմպելիք	ապակյա կամ պլաստմասսայե	կափարիչին
			թիթեղյա	կողային կամ վերին մակերեսին
2203	գարեջուր	գարեջուր	ապակյա կամ պլաստմասսայե	կափարիչին
			թիթեղյա	կողային կամ վերին մակերեսին
2208	2208 ապրանքային դիրքին դասվող՝ մինչև 9 տոկոս սպիրտայնությամբ խմիչքներ՝ ներառյալ ալկոհոլային կոկտեյլները	կոկտեյլ	ապակյա կամ պլաստմասսայե	կափարիչին
			թիթեղյա	կողային կամ վերին մակերեսին
2009	մրգահյութեր և բանջարեղենի հյութեր, չխմորված և սպիրտ չավելացված	հյութ	ապակյա կամ պլաստմասսայե	կափարիչին
			թիթեղյա	կողային կամ վերին մակերեսին
			ստվարաթղթի հիմքով	կափարիչին կամ կողային մակերեսին

7. Արգելվում է դրոշմապիտակներով դրոշմավորումը կատարել սույն կանոնների 6-րդ կետով չնախատեսված տեղում:

8. Արգելվում է հաստատված նմուշի դրոշմապիտակների վրա կատարել նշագրումներ (կնիքներով, դրոշմակնիքներով կամ այլ կերպ), դրոշմապիտակները կամ դրանց մի մասը ծածկել անթափանց թաղանթներով (բացառությամբ վերադրոշմավորման դեպքերում կափարիչի (խցանի) վրա հերթական նմուշի դրոշմապիտակով՝ սույն կարգին համապատասխան վերադրոշմավորման դեպքերի): Անթափանց թաղանթներով ամբողջովին կամ մասնակիորեն ծածկված (դրոշմանիշի սերիան, համարը և այլ պաշտպանիչ տարրեր պարունակող մասերը)

դրոշմապիտակներով դրոշմավորված կամ նույնականացնող նշումներով նշագրված (հաստատված նմուշով չնախատեսված նույնականացնող նշումներ ունեցող) դրոշմապիտակներով դրոշմավորված ապրանքների իրացումը համարվում է որպես չդրոշմավորված ապրանքների իրացում:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ  
Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**